Մ-91

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ ԳԵՈՐԳԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

1590 Թ. ԵՐԵՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԵՎ 1728 Թ. ԵՐԵՎԱՆԻ ԼԻՎԱՅԻ ՈՒ ՆՐԱ ՀՅՈՒՍԻՍՍԱՅԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆԻ ՕՍՄԱՆՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԵՐԸ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ավագյան Ա. Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Կոստիկյան Ք. Պ.

պատմական գիտությունների թեկնածու Երանյան Գ. Հ.

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հուլիսի 3-ին, ժամը 13⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան, պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունիսի 1-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Պատմական Հայաստանի արևելյան հատվածը, XVI և XVIII դարերում հիմնականում գտնվելով Սեֆյան Իրանի տիրապետության ներքո, օսմանա-սեֆյան պատերազմների հետևանքով՝ քանիցս ենթարկվել է Օսմանյան կայսրության հարձակումներին: Դրանց թվում հատկապես առանձնացել են օսմանյան բանակի նվաճողական գործողությունները XVI դարի վերջերին և XVIII դարի սկզբներին, որոնցից յուրաքանչյուրի ժամանակ կայսրության զորքերին հաջողվել է մեկ տասնամյակից ավելին իրենց տիրապետությունը հաստատել Արևելյան Այսրկովկասում:

Պատերազմական գործողությունների հետևանքով հայ ժողովուրդը մասնավորապես ժողովրդագրության և սոցիալ-տնտեսական կացության համատեքստում նոր իրողության առջև է կանգնել: Այդ նոր իրավիճակի լուսաբանման համար կարևորություն ունեն այնպիսի սկզբնաղբյուրներ, ինչպիսիք են օսմանյան ընդարձակ հարկացուցակները՝ աշխարհագիր մատյանները (*թահրիր դեֆթերները*[1]), որոնք կարող են օգտակար լինել միաժամանակ մի շարք խնդիրների հետազոտման համար: Նախ և առաջ, դրանք թույլ են տալիս մեծ ճշգրտությամբ քննել աշխարհագրի անցկացման պահին եղած ժողովրդագրական պատկերը, ինչպես նաև ուսումնասիրել սահմանված հարկերը, որոնք վճարվել են նոր իշխանություններին: Հիշատակված աշխարհագիր մատյաններում ըստ հարկատուների թվի (հաճախ ընտանիքների) ներկայացվում է նրանց զբաղմունքը, դավանական պատկանելությունը: Դրանք արժեքավոր փաստաթղթեր են նաև Օսմանյան կայսրության վարչա-քաղաքական միավորների զարգացման դինամիկայի ուսումնասիրության տեսանկյունից, քանի որ թույլ են տալիս պարզել, թե մեզ հետաքրքրող երկրամասը ի՞նչ միավորների է բաժանված եղել տարբեր պատմական դարաշրջաններում:

Օսմանյան հարկամատյանների ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ հարկային ցուցակները հատուկ ուշադրության են արժանանում նաև հարևան Ադրբեջանի Հանրապետության պատմագրությունում: Օսմանյան բնագրերը Թուրքիայի Հանրապետության արխիվներներից վերցված լինելով՝ փորձ է արվել ներկայացնել

[1] Սահակյան Լ., Բարձր Հայքի Բարերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007, էջ 4:

տարածաշրջանը որպես մահմեդաբնակ՝ «Արևմտյան Ադրբեջան»[2]: Օսմանյան աշխարհագիր մատյանների քննությունը հնարավորություն է ընձեռում ոչ միայն ճշգրիտ ներկայացնել այնտեղ արձանագրված բոլոր տվյալները, այլ նաև՝ անաչառության սկզբունքով ստացված տվյալները համեմատել ադրբեջանական և հնարավորինս՝ նաև թուրքական տվյալների միջև:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ատենախոսությունը ժամանակագրորեն ընդգրկում է XVI և XVIII դարերը: Ժամանակագրության ընտրությունը պայմանավորված է նրանով, որ Օսմանյան կայսրությունը, նվաճելով Արևելյան Հայաստանը, միայն վերոնշյալ երկու դարաշրջանում է անցկացրել Երևանի (Ռևանի[3]) *վիլայեթի*[4] աշխարհագիր մատյանների գրանցում: Հետևաբար մեծարժեք է այդ երկու հարկամատյանների լուսաբանումն ու համեմատական քննությունը: Ատենախոսության հետազոտության համար նյութ են դարձել 1590 թ. Երևանի *վիլայեթի*[5] և 1728 թ. Երևանի *լիվայի*[6] աշխարհագիր մատյանները: Հատկանշական է, որ ի տարբերություն XVI դարի, օսմանյան իշխանությունները XVIII դարում Երևանի *վիլայեթը* չեն ընդգրկել մեկ ամբողջական մատյանում, ուստի այդ շրջանում Երևանի *վիլայեթն* ամբողջացնող մյուս վարչական միավորը՝ Նախիջևանի *լիվան*, ընդգրկվել է առանձին մատյանում և ներառված չէ սույն ատենախոսությունում[7]:

Վերոնշյալ հարկամատյաններից բացի, ատենախոսության մեջ քննված է նաև մեր ձեռքի տակ եղած հայկական այն շրջանի օսմանյան ընդարձակ հարկացուցակների նյութը, որոնց թվում էին՝ 1728 թ. Թիֆլիսի *վիլայեթի* մաս կազմող Աշոցքի, Տաշիրի և Փամբակի *նահիեները*[8]:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է պատասխանել հետևյալ հիմնական հարցերին.

---

[2] Չորանյան Պ., Հայաստանի պատմության օսմանյան սկզբնաղբյուրների շուրջ, հրապարակումներ, Բանբեր Հայագիտության, Երևան, թիվ 1, 2017, էջ 209:

[3] Օսմանյան հարկամատյաններում Երևանը կոչվել է՝ Ռևան: Այսուհետև՝ Երևան:

[4] Օսմանյան կայսրությունում առավել խոշոր վարչական միավորներն էին՝ վիլայեթը (էյալեթ), լիվան (սանջաքը), քազան և նահիեն, որոնց հայերեն համարժեքներն են համապատասխանաբար՝ նահանգը, գավառը, գավառակը և գյուղախումբը: Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 66:

[5] T.C. Başbakanlık Osmanlı Arşivi, TT_d, sıra nu: 0633, Tapu Tahrir Defteri.

[6] T.C. Başbakanlık Osmanlı Arşivi, TT_d, sıra nu: 0901, Tapu Tahrir Defteri.

[7] T.C. Başbakanlık Osmanlı Arşivi, TT_d, sıra nu: 0905, Tapu Tahrir Defteri.

[8] 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი. ოსმალური ტექსტი ქართული თარგმანით, შესავლით, გამოკვლევითა და ფაქსიმილეებით გამოსაცემად მოამზადეს სერგი ჯიქია და ნოდარ შენგელია. წიგნი 1, 2, თბილისი: 2009-2010.

- Պարզել հարկամատյաններում տեղ գտած վարչա-քաղաքական միավորները:
- Ճշտել գյուղանունները և պարզել, թե դրանցից քանիսն էին չբնակեցված (դատարկ):
- Վերհանել ժողովրդագրական պատկերը՝ հնարավորինս համադրելով այլ հեղինակների տեղեկությունների հետ:
- Անդրադառնալ 1590 և 1728 թթ. հայ հոգևորականների և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վերաբերյալ Օսմանյան կայսրության տեղեկություններին:
- Քննվող հարկամատյաններում բացահայտել հնարավոր քրդական աշիրեթների (հանրույթների) գոյությունը:
- Համակողմանի կերպով քննել օսմանյան իշխանությունների սահմանած հարկերը և նրանց դիմաց արձանագրված հարկադրույքները:
- Մատնացույց անել օսմանյան աշխարհագրի անցկացմանն առնչվող ուշագրավ օրինաչափություններ:
- Անցկացնել խնդրո առարկա օսմանյան հարկամատյանների միջև համեմատություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ: Ատենախոսության առանցքը կազմել են 1590 թ. Երևանի *վիլայեթի*, 1728 թ. Երևանի *լիվայի* և Թիֆլիսի *վիլայեթին* պատկանող Աշոցքի, Տաշիրի, Փամբակի *նահիեների* հարկացուցակների քննությունը, որտեղ մեծ է համեմատական մեթոդիկայի նշանակությունը: Ելնելով այդ իրողությունից՝ 1590 թ. Երևանի *վիլայեթի* հարկամատյանը համեմատվել է 1728 թ. Երևանի *լիվայի*, իսկ վերջինս էլ՝ այդ նույն թվականի՝ Թիֆլիսի *վիլայեթի* մաս կազմող հայկական 3 *նահիեի* տեղեկությունների հետ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Հետազոտվող սկզբնաղբյուրները առ այսօր հայագիտական հետազոտություններում առանձին ուսումնասիրության առարկա չեն դարձել և Արևելյան Հայաստանի XVI և XVIII դարերի պատմության համար բացառիկ նշանակություն ունեցող վավերագիտական նյութեր են: Դրանց շնորհիվ հնարավոր է վերհանել մասնավորապես ողջ բնակչության մոտավոր թիվը, պարզել մահմեդական և քրիստոնյա ընտանիքների քանակը, բնակչության տնտեսական զբաղվածությունը և անդրադառնալ հարկատուներից օսմանյան իշխանավորների սահմանած տուրքերին՝ իրենց դրամական արժեքներով: Հնարավոր է ճշգրիտ պարզել բոլոր այն քրդական աշիրեթների գոյությունը, որոնք բնակվել են Երևանի *վիլայեթի* մաս կազմող շրջաններում: Կարևորություն են ներկայացնում հետազոտության առարկա հարկացուցակները կազմելու գործում օսմանյան իշխանությունների գրանցած օրինաչափությունների ուսումնասիրությունը: Հարկամատյանների տեղեկությունների շնորհիվ առաջին անգամ

շրջանառության մեջ է դրվում նաև XVI և XVIII դարերում Օսմանյան կայսրության կողմից Արևելյան Հայաստանի նվաճմամբ սկիզբ դրված վարչա-քաղաքական միավորների քննությունը: Բացի այդ, նորույթ են հայ եկեղեցականներին և հատկապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին շնորհված օսմանյան իրավունքների լուսաբանումը:

Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել հայոց պատմության համապատասխան դասընթացներում և դասագրքերում՝ Օսմանյան կայսրությանը նվիրված հետազոտություններում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արևելյան աղբյուրագիտության և պատմագրության ու Թուրքիայի բաժինների կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած 8 հոդվածում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ): Ատենախոսության շարադրման համատեքստում մեծ նշանակություն ունեն օգտագործված սկզբնաղբյուրների և տարաբնույթ մասնագիտական գրականության ուսումնասիրությունը, որոնք վերաբերում են սույն ատենախոսության հիմքում ընկած հարկացուցակների հետազոտությանը:

Ատենախոսության համար արժեքավոր է ադրբեջանցի հեղինակներ Զիա Բունիաթովի և Հուսամադդին Մամմադովի (Քարամանլը) կազմած 1728 թ. Երևանի *վիլայեթի* համառոտ հարկամատյանի ուսումնասիրությունը[9]: Աշխատանքի ներածական մասում անդրադարձ է կատարվում նաև 1590 թ. Երևանի *վիլայեթի* տվյալներին: Փորձ է կատարվել ներկայացնել նաև՝ ընդհանուր գյուղերի քանակը: Հիշյալ աշխատանքը որը մեզ հետաքրքրել է գլխավորապես ժողովրդագրության տեսանկյունից, տվյալների վերանայման կարիք ունի: Ճշգրիտ չեն հատկապես 1590 թ. Երևանի *վիլայեթի* հարկամատյանում արձանագրված հարկատուների, ընտանիքների, ինչպես նաև՝ գյուղերի ընդհանուր թիվը: Վերանայման կարիք ունի նաև 1728 թ. Երևան քաղաքի ժողովրդագրական պատկերի ուսումնասիրությունը, քանի որ հեղինակների ստացած արդյունքները չեն համապատասխանում հարկամատյանի տվյալներին:

Հետաքրքրություն է ներկայացնում մեկ այլ ադրբեջանցի հեղինակ Մեհմեդ Իսլամօղլուի աշխատանքը, որը վերաբերում է 1590 թ. Երևանի

[9] İrəvan əyalətinin icmal dəftəri. Araşdırma, tərcümə, qeyd və əlavələrin müəllifləri Ziya Bünyadov Hüsaməddin Məmmədov (Qaramanlı), Rəssamı: Hüsaməddin Məmmədov (Qaramanlı) Bakı, 1996.

վիլայեթին պատկանող Օրդուբադին[10]: Կարևորել ենք հատկապես Օրդուբադ քաղաքի ուսումնասիրությունը, որը, անշուշտ, համադրել ենք հարկացուցակի տեղեկությունների հետ:

Ժողովրդագրական տվյալների ուսումնասիրության տեսանկյունից ուշագրավ է նաև Հաքան Քարագյոզի մագիստրոսական աշխատանքը, որը վերաբերում է 1590 թ. Նախիջևանին[11]: Աշխատանքում ուռճացվել է մահմեդականների թիվը, ինչը, անշուշտ, բացասական է ազդել քրիստոնյա և մահմեդական բնակչության քանակական հարաբերակցության վրա:

Ատենախոսության շարադրման համար մեծարժեք է Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատությունը[12], որը մեծ նշանակություն ունի օսմանյան հարկացուցակներում վկայված այն տեղեկությունների հետ համեմատության տեսանկյունից, որոնք վերաբերում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը իր աշխատանքում չի անդրադարձել 1590 թ. օսմանյան իշխանությունների կողմից եկեղեցու կարգավիճակի հարցին, ուստի, հատուկ ուշադրություն ենք դարձրել 1728 թ. Էջմիածնի իրավունքներին:

Փորձել ենք վերհանել 1728 թ. Էջմիածնին պատկանող գյուղերի թիվը: Այդ համատեքստում մեզ օգնել են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի[13] Կաթողիկոսական դիվանում պահվող այն բոլոր օսմանյան վավերագիտական նյութերը, որոնք առնչվում են հատկապես 1725[14], 1726[15], 1727[16] թվականներին գյուղերի նկատմամբ Մայր Աթոռի ունեցած սեփականության իրավունքներին: Դժբախտաբար, չեն հանդիպում նմանօրինակ վավերագիտական նյութեր 1590 թ. եկեղեցու ունեցվածքի վերաբերյալ, քանզի մեզ մնում է բավարարվել միայն այդ նույն թվականի Երևանի *վիլայեթի* հարկամատյանի շատ սուղ տեղեկություններով, որոնք հիմնականում առնչվում են հոգևորականների իրավունքներին:

[10] İslamoğlu M. A., 1590 Tarihli Mufassal Tapu Tahrir Defterine Göre Revan Eyaletinde Alınan Vergiler (Ordubad Kazası orneği), Cappadocia Journal of History and Social Sciences, volume 4, 2014.

[11] Karagöz H., 1590 Tahririne Göre Nahçivan Kazası, Yüksek Lisans Tezi, İsparta, 2001.

[12] Ջամբռ. գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն: Հաւաքեալ ժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմէօնէ ցաւահար եւ ի վշտակոծ կաթուղիկոսէ երեւանցւոյ: ի Վաղարշապատ, 1873 (այսուհետև՝ Ջամբռ):

[13] Այսուհետև՝ Մատենադարան:

[14] Մատենադարան, Կ/դ, թղթ. 1 գ, վավ. 316:

[15] Մատենադարան, Կ/դ, թղթ. 1 գ, վավ. 306:

[16] Մատենադարան, Կ/դ, թղթ. 1 գ, վավ. 314:

Ատենախուսության շարադրման գործում նշանակալի է հարկերի լուսաբանումը: Այդ համատեքստում օգտվել ենք տարաբնույթ մասնագիտական գրականությունից, որոնց շրջանում առանձնանում են Արամ Սաֆրաստյանի և Մանվել Զուլալյանի[17], Հալիլ Ինալջըքի[18], Սադրք Բիլգեի[19], Վալտեր Հինցի[20], Վլադիմիր Ջանևի[21], Յավուզ Էրջանի[22], Ունալ Թաշքընի[23], Նեշեթ Չաղաթայի[24], Սուաթ Յլդըզի[25] և Հավվա Քանգյուլի[26] աշխատանքները: Հարկերի ուսումնասիրության համատեքստում մեծապես օգտվել ենք նաև Մատենադարանի պարսկերեն հրովարտակների առաջին[27], երրորդ[28], չորրորդ[29] պրակներից: Վերջինների տեղեկությունները, թեպետ վերաբերում են Սեֆյան Իրանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանին, այնուամենայնիվ, մեր կողմից վերհանած հարկերը լիովին համապատասխանում են օսմանյան շրջանի հարկատեսակների նշանակությանը:

Ատենախոսության համար կարևոր են նաև Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում հավաքված աշխարհագրական

---

[17] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI- XVII ԴԴ. Կանուննամեներ), թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Զուլալյանի, Երևան, 1964 (այսուհետև՝ Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում):

[18] İnalcik H., Osmanlılar'da Raiyyet Rüsumu, Türk Tarih Kurumu, Belleten, Ankara, cilt: XXIII, sayı: 92, 1959.

[19] Bilge S. M., Osmanlı Çağında Kafkasya 1454-1829 (Tarih-Toplum-Ekonomi), Istanbul, 2012.

[20] Hinz W., İslam'da Ölçü Sistemleri, Çeviren: Sevim A., İstanbul, 1990.

[21] Janev V., The Jews in Macedonia XV- XVII (century), Skopje, 2011.

[22] Ercan Y. Osmanlı İmparatorluğu'nda Gayrimüslimlerin Ödedikleri Vergiler ve Bu Vergilerin Doğurduğu Sosyal Sonuçlar, Türk Tarih Kurumu, Belleten, Ankara, cilt: LV, sayı: 213, 1991.

[23] Taşkın, Ü. Rüsüm-i Örfiye, Tarih Okulu, İzmir, sayı: XIV, 2013.

[24] Çağatay N., Osmanlı İmparatorluğunda Reayadan Alınan Vergi ve Resimler, Dil Tarih Coğrafya Fakültesi Dergisi, Ankara, cilt 5, sayı 5, 1947.

[25] Yıldız S. (H.984) 1576-1577 Tarihli Timar Ruznamçe Defterinde Göre Karaman Eyaleti, Yüksek Lisans Tezi, Konya, 2010.

[26] Kangül H., 16 Yüzyıl Son Çeyreğinde Osmanlı Devleti Gürcistan Eyaletinin İdari ve Nüfüs Yapısı, Yüksek Lisans Tezi, Aydın, 2016.

[27] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, հրովարտակներ, պրակ առաջին (ԺԵ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Դ. Փափազյանը, Երևան, 1956:

[28] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731), կազմեց՝ Ք. Պ. Կոստիկյանը, Երևան, 2005:

[29] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ չորրորդ (1734-1797), կազմեց՝ Ք. Պ. Կոստիկյանը, Երևան, 2008:

տեղեկությունները[30]: Բառարանի հատորների շնորհիվ անդրադարձել ենք հարկամատյաններում գրանցված վարչա-քաղաքական միավորների տեղադրման խնդրին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից:

Ներածության մեջ ներկայացվում է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության ժամանակագրական սահմանները, մեթոդիկան, աղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «1578-1590 ԹԹ. ՕՍՄԱՆԱ-ՍԵՖՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ 1590 Թ. ԵՐԵՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԱՇԽԱՐՀԱԳԻՐԸ», բաղկացած է 4 ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Այսրկովկասի գրավումը Օսմանյան կայսրության կողմից», ներկայացվում են այն իրադարձությունները, երբ Օսմանյան կայսրությունը 1578 թ. ռազմական գործողություններ սկսեց Սեֆյան Իրանի դեմ՝ պատերազմի թատերաբեմ դարձնելով Այսրկովկասը՝ այդ թվում Արևելյան Հայաստանը:

Ուշագրավ են պատերազմի ընթացքում օսմանյան բանակի նախաձեռնած 1579[31] և 1583[32] թթ. արշավանքները Երևան: Առաջին հարձակման ժամանակ ըստ օսմանցի տարեգիր Փեչևիի՝ զոհ են գնացել 20000-ից ավել կանայք և երեխաներ[33], իսկ հայկական աղբյուրներում՝ Հովհաննիսիկ Ծարեցու ժամանակագրության[34] և Էրզրում գավառի Սալածոր գյուղի Առաքել սարկավագի վկայության համաձայն[35], գերիների թիվը հասել է 60000-ի: Օսմանյան երկրորդ արշավանքն օսմանցիների համար մեծ ազդակ է եղել հետագա ռազմական հաջողությունների համար:

---

[30] Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Լ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 1, 2, 3, 4, 5, Երևան, 1986, 1988, 1991, 1998, 2001:

[31] Ալիշան Ղ., Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 300-301:

[32] Հակոբյան Թ., Խ., Երևանի պատմությունը 1500-1800, Երևան, 1971, էջ 17:

[33] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով, հատոր Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյանը, Երևան, 1961, էջ 46-47:

[34] Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հատոր II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյանը, Երևան, 1956, էջ 241:

[35] Լեո, հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք առաջին, Երևան, 1969, էջ 195:

Օսմանյան կայսրությունը արդեն 1588 թ. կարողանում է իր դիրքերը հաստատել ողջ Այսրկովկասում՝ իրանական Ատրպատականով հանդերձ[36], որի պայմաններում, ի թիվս գրավյալ այլ շրջանների, նախաձեռնել է Երևանի *վիլայեթի* աշխարհագիր մատյանի գրանցումը: 1590 թ. Կոստանդնուպոլսում պատերազմող կողմերի միջև հաշտության պայմանագրից հետո, օսմանցիներին հաջողվում է շուրջ 12 տարի իշխել Այսրկովկասում:

Երկրորդ ենթագլխում՝ «1590 թ. Երևանի վիլայեթի աշխարհագրի հատվածները», հանգամանորեն ներկայացվում է Երևանի *վիլայեթի բանուննամեն* (օրինամատյան[37]), որտեղ տեղ գտած դրույթները կազմել են նշյալ *վիլայեթի* օրենքների հիմքը: Հատկանշական է, որ դրանք բաղկացած են 18 հատվածից: Դրանց բովանդակությունը հիմնականում վերաբերում է հարկատեսակներին՝ դրանց դիմաց սահմանված հարկաչափերին, վճարման ժամանակահատվածին, հպատակի և ֆեոդալի փոխհարաբերություններին առնչվող որոշ իրավունքներին և մի շարք հանցագործությունների պարագայում օրենքի ուժ ստացած պատիժներին:

Հատուկ կարևորություն է ներկայացնում *քանուննամեի* տասնմեկերորդ հատվածը, որտեղ հատուկ անդրադարձ է կատարվում ոչ մահմեդական[38] հոգևորականների իրավունքներին՝ սահմանվում իշխանությունների շնորհած արտոնություններն ու պարտականությունները:

Երրորդ ենթագլխում՝ «Երևանի վիլայեթի վարչական բաժանումը ըստ 1590 թ. աշխարհագրի» քննվում են Երևանի վիլայեթին պատկանող թվով 27 վարչա-քաղաքական միավորները, որոնց թվին էին դասվում՝ Երևանը, Կարբին, Գառնին, Վեդին, Արալքը, Թալինը, Արմավիրը, Աբնիքը (՞)[39], Ապարանը, Շարաբխանեն, Աղչաքալան, Նախիջևանը, Մեվազիհ Խաթունը, Մելիք-Արսլանլուն, Ղարաբաղը, Դարաշամը, Դարաշահբուզը, Բազարչայը, Շարուրը, Զառը, Զեբիլը, Ալընջան, Սիսիանը, Օրդուբադը, Ազադջիրանը, Շորլութը և Դերենուրքութը: Վարչա-քաղաքական միավորներից 7-ը՝ Երևանը, Նախիջևանը, Շարուրը, Աղչաքալան, Թալինը, Արալքը և Օրդուբադը *քազաներ* էին, որոնցից Երևանի, Նախիջևանի և Օրդուբադի *քազաներին*, որպես *նահիե*, պատկանել են մնացյալ շրջանները՝ իրենց գյուղերով հանդերձ, ինչը նշանակում է, որ Շարուրը, Աղչաքալան, Թալինը և Արալքը զուրկ էին որևէ *նահիեից* (ընդգրկում էին միայն գյուղեր):

[36] Հայոց պատմություն, հատոր II, միջին դարեր (IV դարի կես-XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ, միջին դարեր (IX դարի կես - XVII դարի առաջին կես), Երևան, 2014, էջ 601:

[37] Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 5:

[38] Խոսքն առաջին հերթին հայազգի հոգևորականների մասին է:

[39] Հարցական նշան է դրված այն տեղանվան վրա, որի օսմանյան տեքստի ճիշտ արտասանության մեջ վստահ չենք:

Վիլայեթում ընդհանուր հաշվվում է շուրջ 763 գյուղ: 1590 թ. Երևանի *վիլայեթի* հարկացուցակներում հանդիպում են դեպքեր, երբ ամբողջությամբ բնակիչներից զուրկ են եղել մի շարք վարչա-քաղաքական միավորներ: Դրանց թվին են դասվել՝ Ապարանը, Շարաբխանեն, Աբնիքը (՞), Բազարչայը, Զառը և Զաբիլը:

Վերհանել ենք *վիլայեթի* ժողովրդագրական պատկերը: Հիմք ընդունելով թուրք օսմանագետ Օմեր Լյութֆի Բարքանի այն տեսակետը, ըստ որի՝ յուրաքանչյուր ընտանիք միջինը բաղկացած է եղել 5 անդամից[40], կարելի է փաստել, որ ամբողջ *վիլայեթում* կարելի է հաշվել ընդհանուր 44425 բնակիչ, որոնցից 28166-ը՝ քրիստոնյա, իսկ 16259-ը՝ մահմեդական:

Վերոնշյալ ենթագլխում հաշվել ենք նաև յուրաքանչյուր վարչա քաղաքական միավորում արձանագրված այգիների, պարտեզների, ջրաղացների, ձիթհանների և այլ սեփականության միջոցների քանակը:

Չորրորդ ենթագլխում՝ «Երևանի վիլայեթի հարկատեսակներն ու չափերը ըստ 1590 թ. աշխարհագրի», քննվում են 1590 թ. Երևանի *վիլայեթում* օսմանյան իշխանությունների սահմանված հարկերը: Հատկանշական է, որ հատուկ կարևորություն են ներկայացրել հատկապես ցորենի, գարու, բամբակի, այգիների միանվագ վճարի և բրնձի հարկերը: Նշյալ հարկատեսակների դիմաց գանձվել են ամենաբարձր հարկատեսակները, ինչը նշանակում է որ դրանց մշակության համար *վիլայեթի* հողերը առավել նպաստավոր էին:

Հարկերի քննությունից պարզվում է, որ օսմանյան իշխանությունները որոշ հարկատեսակների դիմաց՝ սահմանել էին նրանց հստակ դրամական արժեքը, որոնք համեմատվել են նույն ժամանակահատվածի Թիֆլիսի *վիլայեթում* գրանցված համանման տվյալների հետ: Կարևոր է նաև հարկաչափերի ընդհանուր քննությունը, որից կարելի է փաստել, որ *վիլայեթում* ամենաբարձր հարկաչափը գրանցվել է Ջուլիա գյուղի դիմաց:

Ենթագլխում անդրադարձ է կատարվում նաև օսմանյան իշխանությունների հարկացուցակների անցկացման կարգի օրինաչափություններին, որոնց թվում կարելի է նշել հատկապես հարկատուների անձանունները 7-ական սյունյակով ներկայացված լինելը, միևնույն գյուղում քրիստոնյա և մահմեդական բնակչության առկայության պարագայում նրանց անձանունների տարանջատումը, քանական թվականները տառային արժեքների միջոցով շարադրումը:

[40] İslamoğlu M. A., նշվ., աշխ., էջ 135:

Երկրորդ գլուխը՝ «XVIII ԴԱՐԻ I ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՍՏԻՆ ՆՎԱՃՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՎ 1728 Թ. ԵՐԵՎԱՆԻ ԼԻՎԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳԻՐԸ», բաղկացած է 4 ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Արևելյան Հայաստանի վերստին նվաճումը Օսմանյան կայսրության կողմից» նկարագրվում են քաղաքական այն իրադարձությունները, որոնց ժամանակ Օսմանյան կայսրությունը նախաձեռնում է Սեֆյան Իրանի տիրապետության ներքո գտնվող շրջանների նվաճումը: Հնարավորինս սպառիչ ներկայացվում են Օսմանյան և Ռուսական կայսրությունների պետական շահերն ու նպատակները, որոնք 1720-ական թվականներին փորձում էին տիրել ամբողջ տարածաշրջանին:

Ենթագլխում մեծ կարևորություն է ներկայացնում հայ և վրաց ժողովուրդների արևելյան հատվածի ազատագրական պայքարը: Այդ գործընթացը մեծապես ուղեկցվում էր հայերի՝ ռուսների հանդեպ ունեցած բացահայտ համակրանքով[41]:

Այնուամենայնիվ, 1724 թ. հունիսի 12-ի համաձայնագրով՝ Օսմանյան և Ռուսական կայսրությունները տարածաշրջանը բաժանեցին ազդեցության գոտիների: Օսմանյան իշխանությունները, որոնք կարճ ժամանակամիջոցում կարողացավ ենթարկել նաև ողջ Արևելյան Հայաստանը, ամբողջ տարածքով անցկացրեցին ընդարձակ հարկամատյանների գրանցում:

Երկրորդ ենթագլխում՝ «Երևանի լիվան ըստ 1728 թ. աշխարհագրի», հանգամանորեն ներկայացվում են Երևանի *լիվային* պատկանող թվով 14 վարչա-քաղաքական միավորները, որոնցից են եղել՝ Երևանը, Քըրք Բուլաքը, Կարբին, Դարաչիչեքը, Ապարանը, Սուրմալուն, Իգդիրը, Արալըքը, Սադարաքը, Մակուն, Շարուրը, Վեդին, Գառնին և Շորագյալը: Հարկամատյանից պարզ է դառնում, որ *լիվայում քազայի* կարգավիճակ են ունեցել Երևանը և Կարբին, որոնցից առաջինը բաղկացած է եղել միայն քաղաքից, այնինչ Կարբին՝ քաղաքից բացի, նաև բազմաթիվ գյուղերից: Մյուս բոլոր վարչական միավորները փաստացի եղել են *նահիե:*

Մեծ ուշադրություն է դարձվել ժողովրդագրական տվյալներին: Երևան քաղաքի ժողովրդագրական պատկերի համատեքստում տվյալների տարբերություն ենք արձանագրել ադրբեջանցի հեղինակների տվյալների և խնդրո առարկա հարկամատյանի միջև: Ինչ վերաբերում է ամբողջ *լիվայի* ժողովրդագրությանը, ապա ընդհանուր բնակվել է 69112 բնակիչ, որոնցից 27589-ը՝ քրիստոնյա, իսկ 41523-ը՝ մահմեդական: Հատկանշական է, որ

[41] Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 493:

միայն քրիստոնեաբնակ էր Կարբի քաղաքը, իսկ սոսկ մահմեդաբնակ էին՝ Սադարաքի Շարուրի *նահիեները:*

Ենթագլխում ադրադարձ է կատարվում նաև քրդական աշիրեթների՝ գոյությանը, հանգամանորեն տրվելով՝ նրանց անվանումները: Հայտնի է դառնում, որ նրանք բնակվել են Քըրք Բուլաքում, Կարբիի գյուղերում, Արալըքում, Սադարաքում, Մակուում, Շարուրում և Շորագյալում:

Հանգամանորեն նշվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին տրված օսմանյան իշխանությունների իրավունքները: Ուշագրավ է, որ Էջմիածինը, որը 1728 թ. տիրապետել է 3 գյուղի, բավականաչափ սեփականություն է ունեցել ոչ միայն բուն Վաղարշապատում, այլ նաև՝ դրա սահմաններիս դուրս: Ամբողջ *լիվայի* համատեքստում փորձ է կատարվել հաշվել նաև սեփականության իրավունքով շահագործվող ունեցվածքների թիվը:

Երրորդ ենթագլխում՝ «Երևանի լիվայի հարկերը ըստ 1728 թ. աշխարհագրի», ուսումնասիրության են ենթարկվում Երևանի *լիվայի* հարկերը, որոնք ամբողջացնում են հարկամատյանի տեղեկությունները: Պարզ է դառնում, որ *լիվայում* բավականաչափ բարձր են եղել ցորենի, գարու, բաբակի, բրնձի բերքից, ինչպես նաև՝ այգիների միանվագ վճարից գանձվող հարկադրույքները:

Օսմանյան իշխանությունները 1728 թ. ի թիվս այլ հարկատեսակների, հստակ հարկաչափ են սահմանել նաև մահմեդական ամուրիներից, որը բացատրվում է կայսրության ներքին կյանքի դժվարություններով: Բացի այդ, քննության են ենթարկվում նաև *լիվայի* ամենամեծ տնտեսություն ունեցող բնակավայրը, որը ըստ հարկադրույքների տվյալների՝ եղել է Վաղարշապատ գյուղը: Համեմատելով 1725 և 1728 թթ. Վաղարշապատի հարկերը, կարելի է փաստել, որ օսմանյան իշխանությունները 1728 թ. որդեգրել են հարկաչափերի բարձրացման քաղաքականություն[42]:

Չորրորդ ենթագլխում՝ «1590 թ. Երևանի վիլայեթի և 1728 թ. Երևանի լիվայի աշխարհագրերի համեմատությունը», ուսումնասիրության է ենթարկվում XVI և XVIII դարերի խնդրո առարկա հարկամատյանները, որտեղ մեծ տեղ է հատկացվել ընդարձակ հարկացուցակներ կազմելու գործում օսմանցիների կիրառած մեթոդաբնական սկզբունքներին: Մեծարժեք է 1590 թ. Երևանի *վիլայեթում* և 1728 թ. Երևանի *լիվայում* տարածված հարկատեսակների և նրանց դրույքաչափերի համեմատական քննությունը: Բացի այդ, ուշադրության է առնվում վարչա-քաղաքական միավորների լուսաբանումը՝ հնարավորության սահմաններում՝ հատկապես մատնանշվելով, թե որ շրջաններն էին հպնդիպում 2 հարկամատյանում:

[42] Փափազյան Հ., Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, Բանբեր Մատենադարանի, Երևան, թիվ 5, 1960, էջ 452:

Երրորդ գլուխը՝ վերնագրված է «ԹԻՖԼԻՍԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԱՇՈՑՔԻ, ՏԱՇԻՐԻ, ՓԱՄԲԱԿԻ ՆԱՀԻԵՆԵՐԸ XVIII ԴԱՐՈՒՄ (ԵՐԵՎԱՆԻ ԼԻՎԱՅԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ)»: Աշոցքի (օսմաներեն՝ Քայքուլի), Տաշիրի և Փամբակի *նահիեների* աշխարհագրերը, Երևանի *լիվայի* օրինակով գրի առնվելով 1728 թ., մեծ նշանակություն ունեն նույն թվականի Երևանի *լիվայի* հարկամատյանի հետ համեմատության տեսանկյունից: Հարկ է նշել, որ թեպետ այդ *նահիեները* նշյալ ժամանակահատվածում Երևանի *վիլայեթի* սահմաններից դուրս են գտնվել, այնուամենայնիվ, դրանք լինելով հայկական տարածքներ, ընդգրկվել են մեր ուսումնասիրության մեջ:

Հանգամանորեն ներկայացվում են 3 *նահիեի* հարկացուցակների ամբողջական տեղեկությունները: Հատկապես կարևոր են ժողովրդագրական տվյալները: Հարկացուցակներից պարզ է դառնում, որ ամենամեծ բնակչությամբ աչքի է ընկել Աշոցքը, որտեղ գրանցվել է ընդհանուր շուրջ 7325 անձ, որոնցից մահմեդականները միայն 115-ն են եղել: Տաշիրում կարելի է ասել, որ բնակչությունը բաղկացած է եղել բացառապես քրիստոնյաներից, այնինչ՝ Փամբակում՝ ժողովրդագրական պատկերը՝ 2017-ը 1088-ի դիմաց հարաբերակցությամբ հօգուտ մահմեդականների էր: Հատկանշական է, որ Աշոցքը մյուս 2 *նահիեի* համեմատությամբ աչքի է ընկել նաև ամենամեծ սոցիալ-տնտեսական ներուժով:

Երրորդ գլխի շարադրանքում առանցքային մաս է կազմում վերոնշյալ 3 *նահիեի* և 1728 թ. Երևանի *լիվայի* համեմատությունը, որտեղ լուսաբանվում են օսմանյան իշխանությունների արձանագրած օրինաչափությունները: Հատկանշական է, որ հարկատեսակները 1728 թ. Թիֆլիսի *վիլայեթի* մաս կազմող շրջաններում և Երևանի *լիվայում* հիմնականում համընկնում են: Նույնն է եղել ցորենի և գարու առաջնահերթության գործոնը, քանի որ դրանց դիմաց սահմանված հարկաչափերը բավականաչափ բարձր են եղել: Այնուամենայնիվ, որոշ հարկատեսակների դիմաց սահմանված հստակ արժեքի համատեքստում, նկատելի են զգալի տարբերություններ: Հնարավորինս մանրամասն համեմատության ենք ենթարկել նաև հարկացուցակների կազման սկզբունքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ներկայացված են ատենախոսության հիմնական եզրահանգումները:

1. Ըստ 1590 թ. հարկամատյանի՝ Երևանի *վիլայեթը* բաղկացած է եղել թվով 7՝ Երևանի, Նախիջևանի, Շարուրի, Աղչաքալայի, Թալինի, Արալքքի և Օրդուբադի *քազաներից: Քազաներից* 3-ը՝ Երևանը, Նախիջևանը և Օրդուբադը ունեցել են քաղաք և բաժանվել են *նահիեների*, որոնք էլ իրենց հերթին՝ գյուղերի: Ամենաշատ *նահիեներով* աչքի ընկած *քազաները* Երևանն ու Օրդուբադն էին. նրանք ունեին 8-ական *նահիե*, Նախիջևանը՝ 7: Ինչ վերաբերում է մյուս 4 *քազային*, ապա նրանք զուրկ են եղել *նահիեներից* և

ներառել են միայն գյուղեր: Ըստ 1590 թ. Երևանի *վիլայեթի քազաների* և *նահիեների* ընդհանուր թվի՝ օսմանյան իշխանությունները *վիլայեթը* բաժանել են 27 վարչա-քաղաքական միավորի միջև:

Երևանի *լիվան* 1728 թ. բաղկացած է եղել 14 վարչա-քաղաքական միավորից, որոնցից էին՝ Երևանը, Քըրք Բուլաքը, Կարբին, Դարաչիչեքը, Ապարանը, Սուրմալուն, Իգդիրը, Արալքքը, Սադարաքը, Մակուն, Շարուրը, Վեդին, Գառնին և Շորագյալը: Դրանց շրջանում *քազայի* կարգավիճակ են ունեցել Երևանը և Կարբին: Առաջինը աշխարհագիր մատյանում ենթադրել է միայն քաղաք, իսկ Կարբին ներառել է քաղաք և դրան ենթակա գյուղեր:

Քանի որ մեր հետաքրքրությունների շրջանակից դուրս է գտնվում Թիֆլիսի *վիլայեթի* ամբողջական ուսումնասիրությունը, ուստի բավարարվել ենք միայն Աշոցքի, Տաշիրի և Փամբակի *նահիեների* հարկացուցակների քննությամբ:

2. Հարկացուցակների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ *նահիեներում* նկատելի տոկոս են կազմել չբնակեցված բազմաթիվ գյուղերը: Դրանց դիմաց սովորաբար նշվել է գյուղանունը և ընդհանուր հարկաչափը: Հարկադրույքի արձանագրումը ենթադրել է տվյալ բնակավայրի սոցիալ-տնտեսական ներուժը, որը ուժի մեջ պետք է մտներ բնակչության վերադարձի պարագայում:

1590 թ. Երևանի *վիլայեթի* հարկացուցակներում եղել են միանգամայն դատարկված վարչա-քաղաքական միավորներ: Դրանց թվին են դասվել՝ Ապարանը, Շարաբխանեն, Աբնիքը (՞), Բազարչայը, Զառը և Զաբիլը: Հատկանշական է, որ Երևանի *լիվայում* և Աշոցքի, Տաշիրի ու Փամբակի հարկացուցակներում հանդիպում են միայն չբնակեցված գյուղեր:

Մեզ հաջողվել է պարզել նաև հարկամատյաններում գրանցված գյուղերի ընդհանուր թիվը: Այսպես օրինակ՝ 1590 թ. Երևանի *վիլայեթում* հաշվվում է շուրջ 763, իսկ Երևանի *լիվայի* նշյալ հարկամատյանում՝ 1015 գյուղ: Ինչ վերաբերում է Թիֆլիսի վիլայեթին պատկանող նահիեներին, ապա գյուղերի թիվը կազմել է 170-ը:

3. Համադրելով 1590 թ. և 1728 թ. հարկամատյանները՝ փորձ է արվել վերհանել ժողովրդագրական պատկերը: 1590 թ. Երևանի *վիլայեթում* քրիստոնյաները մեծամասնություն են կազմել, որն արտահայտվել է շուրջ 63.4%-ը 36.6%-ի դիմաց հարաբերակցությամբ: Հարկամատյանի տեղեկությունների համաձայն՝ *վիլայեթում* սոսկ քրիստոնեաբնակ էին Մեվազիի Խաթունի, Դարաշամի և Դերենուրգութի *նահիեները*, իսկ Մելիք Արսլանլու, Ղարաբաղ և Շարուր վարչա-քաղաքական միավորները՝ մահմեդաբնակ: Ստացված տվյալները համեմատելով ադրբեջանցիների կազմած Երևանի *վիլայեթի* համառոտ մատյանի տեղեկությունների հետ, նկատում ենք ժողովրդագրական տվյալների անճշտություններ:

Ժողովրդագրական պատկերը այլ էր 1728 թ. Երևանի *լիվայում*, որի հարկամատյանից երևում է, որ բնակչության մեծամասնությունը եղել են մահմեդականները: Վերջիններս կազմել են *լիվայի* շուրջ 60.9%-ը, իսկ քրիստոնյաները՝ 39.1%-ը: Երևանի *լիվայում* ամբողջովին քրիստոնեաբնակ էր միայն Կարբի քաղաքը, իսկ միայն մահմեդականներով էին զբաղեցված՝ Սադարաքը և Շարուրը:

Աշոցքի, Տաշիրի և Փամբակի ժողովրդագրական պատկերի համատեքստում կարելի է նշել, որ առաջին երկու *նահիեում* քրիստոնյաները համապատասխանաբար կազմել են ընդհանուր բնակչության շուրջ 98.4% և 100%-ը: Սակայն պատկերը այլ էր Փամբակում, ուր քրիստոնյաները կազմել են ընդհանուր բնակչության շուրջ 35%-ը:

4. 1590 և 1728 թթ. օսմանյան հարկամատյանները կարևոր սկզբնաղբյուրներ են օսմանյան սուլթանների կողմից հայ եկեղեցականներին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին վերաբերող տեղեկությունների քննության համար: Հայոց եկեղեցու իրավունքների մասին ընդամենը համառոտ նշվում է 1590 թ. *վիլայեթի քանուննամեի* շարադրանքում: Մասնավորապես խոսվում է եկեղեցուն շնորհված հարկային արտոնությունների և հոգևորականների կողմից միանվագ վճարի մասին:

1728 թ. Էջմիածնին են պատկանել թվով 3 գյուղ՝ Վաղարշապատը, Օշականը և Մաստարան: Հատկանշական է, որ Քիրաջլու և Ֆրանկանոց գյուղերը, ի տարբերություն 1725 թ. օսմանյան քաղվածքի, առնվազն 3 տարի այլևս ենթակա չեն եղել Էջմիածնին: Մայր Աթոռը Վաղարշապատում տիրապետելով հիմնականում քարավանատան, վարելահողերի, ձիթհանների, ջրաղացների, անասունների, սեփականություն է ունեցել նաև գյուղի սահմաններից դուրս:

5. 1728 թ. հարկամատյանից պարզվում է, որ Երևանի *լիվայում* բնակվել են՝ Թաջիլի, Քարաջալար, Քամարլու Սեյֆիաբադ, Թուրքեմանլու, Շանլու, Բուրդքուլու, Քուզիքուդանլու, Քաչիլու, Շիթլու, Իսհանլու, Շիրելու, Բանադ, Շիքլի, Զանգինե, Բայաթ, Դունբուլի, Իրամլու, Խաջումլու, Մուղանլու քրդական աշիրեթները, որոնք արձանագրվել են Քըրք Բուլաքում, Կարբիի գյուղերում, Արալըքում, Սադարաքում, Մակուում, Շարուրում և Շորագյալում:

6. Ատենախոսությունում կարևոր նշանակություն ունի հարկերի ուսումնասիրությանը: Կարելի է փաստել, որ թեպետ 1590 թ. Երևանի *վիլայեթում* և 1728 թ. Երևանի *լիվայում* արձանագրվել են տարբեր հարկատեսակներ, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, տուրքերի շրջանառության հիմնական առանցքը նույնն էր: Այդ միտումը վերաբերում է նաև Աշոցքի, Տաշիրի ու Փամբակի և Երևանի *լիվայի* հարկատեսակների համեմատությանը:

1590 թ. *վիլայեթում* առաջնահերթ նշանակություն են ունեցել հատկապես ցորենի, գարու, բամբակի, այգիների միանվագ վճարի և բրնձի հարկերը, որոնցից գանձվող հարկաչափերը ամենաբարձրն էին: Հատկանշական է, որ այդ միտումը նկատելի է նաև 1728 թ. Երևանի *լիվայի* հարկացուցակներում: Ցորենի և գարու հարկադրույքների բարձրարժեք լինելը վերաբերում է նաև Թիֆլիսի *վիլայեթի* խնդրո առարկա *նահիեներին:* Ի թիվս այլ հարցերի, մեծ կարևորություն ենք տվել հարկաչափերի համեմատությանը: Պարզվում է, որ միևնույն հարկատեսակների դիմաց հստակ սահմանված հարկաչափերը տարբեր են եղել ըստ հարկամատյանների: 1728 թ. դրանց դրամական արժեքը շատ ավելի բարձր է եղել 1590 թ. համեմատությամբ:

Հստակ սահմանված արժեքների փոփոխություն է նկատվում նաև Երևանի *լիվայի* և Աշոցքի, Տաշիրի, Փամբակի տեղեկությունների միջև: Այդ միտումը հիմնականում պայմանավորված է եղել տվյալ ժամանակահատվածում Օսմանյան կայսրության որդեգրած հարկային քաղաքականության տարբերություններով և *վիլայեթի* առանձնահատկություններով:

7. Հարկամատյանների քննությունը հնարավորություն է տալիս վերհանել այն օրինաչափությունները, որոնք վերաբերում են օսմանյան հարկամատյանների գրանցման կարգերին: Մասնավորապես օսմանյան իշխանությունները 1590 և 1728 թթ. Երևանի *վիլայեթի* մաս կազմող շրջաններում հարկատուների գրանցման ժամանակ սկզբում նշել են մահմեդականներին, այնուհետև՝ տվյալ բնակավայրի քրիստոնյա բնակչությանը: Նման իրողությունը չի հանդիպում Աշոցքում, Տաշիրում և Փամբակում, ուր բոլոր հարկատուները շարադրվել են ոչ հատուկ կանոնակարգված ձևով: Բացի այդ, 1590 թ. Երևանի *վիլայեթում* օսմանյան իշխանությունները բոլոր քանակական թվականները գրի են առել տառային արժեքներով, որը չի հանդիպում խնդրո առարկա այլ հարկամատյաններում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Վաղարշապատի 1728 թ. օսմանյան հարկացուցակը, Բանբեր Մատենադարանի, Երևան, թիվ 23, 2016, էջ 170-193:

2. Այսրկովկասի քաղաքական իրավիճակը 1720-ական թվականներին, Հայագիտության հարցեր, Երևան, թիվ 2, 2017, էջ 60-67:

3. Աշոցք գավառը 1728 թ. օսմանյան հարկացուցակում, Բանբեր Հայագիտության, Երևան, թիվ 2, 2017, էջ 29-34:

4. Տաշիր գավառը 1728 թ. օսմանյան հարկացուցակում, Պատմաբանասիրական հանդես, Երևան, թիվ 3, 2017, էջ 134-138:

5. Փամբակ գավառը 1728 թ. օսմանյան հարկացուցակում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, թիվ 3, 2017, էջ 99-106:

6. Երևանի (Ռևանի) վիլայեթը 1590 թ. քանուննամեում, Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Բ, միջազգային գիտաժողով, Երևան, 7-8 դեկտեմբերի, 2017, զեկուցումներ և զեկուցումների դրույթներ, էջ 176-181:

7. Վեդի գավառը 1590 թ. օսմանյան հարկացուցակում, Հայագիտական հանդես, Երևան, թիվ 1, 2018, էջ 181-185:

8. Գառնի գավառը 1590 թ. օսմանյան հարկացուցակում, Կանթեղ, Երևան, թիվ 1, 2018, էջ 108-112:

МИРЗАБЕКЯН ГЕОРГИЙ АЛЕКСАНДРОВИЧ

ОСМАНСКИЕ ПЕРЕПИСИ ЕРЕВАНСКОГО ВИЛАЙЕТА 1590 Г., ЕРЕВАНСКОЙ ЛИВЫ 1728 Г., А ТАКЖЕ СОПРЕДЕЛЬНОГО ЕЙ СЕВЕРНОГО РЕГИОНА (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ)

Диссертация на соискание ученой степени кандитата исторических наук по специальности 07.00.05 “Историография, источниковедение”.

Защита состоится 3-го июля 2018 г., в 13^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Данное исследования главным образом посвящено османским налоговым реестрам Ереванского *вилайета* 1590 г., Ереванской *ливы* и регионам Ашоцка, Ташира и Памбака 1728 г.: последние состовляли часть Тбилисского *вилайета*.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы, а также приложений. Во введении обосновываются важность и актуальность исследования, пространственные и временные рамки, его цели и задачи, представляется научная новизна диссертации и анализироваются использованные источники и литература.

В первой главе - «1578-1590 гг. Османо-Сефевидская война и перепись Ереванского *вилайета* 1590 г.» излагается история войны между Османской империей и Сефевидского Ирана в конце XVI века. Представляются события в результате которых Османской Империи удалось завоевать Закаваказье и удерживать эти территории на протяжении более одного десятки лет. Тщательно изучается

налоговый реестр Ереванского *вилайета*, включая его административно-политические деления, названия всех сел, этнодемографическое состояние и количество имуществ, которым владело население. Кроме того, всесторонне рассматриваются взимаемые налоги, что дает четкое представление о социально-экономическом положении *вилайета*.

Во второй главе - «Новое завоевание Восточной Армении Османской империей в третьем десятилетии XVIII века и перепись Ереванской *Ливы* 1728 г.» представляется история политического развития, впоследствие которого Восточная Армения вновь подверглась османскому завоеванию. Надлежащим образом выявляется административно-политическое деление, изучаются этнодемография и социально-экономические вопросы. В этой главе мы также коснулись вопросов предостовленным османами Св. Престолу правам. Подробно сравниваются переписи Ереванского вилайета и Ереванской *Ливы*, соответственно 1590 и 1728 годов.

В третьей главе - «*Нахия* Ашоцка, Ташира и Памбака Тбилисского *вилайета* в XVIII веке (сравнение с Ереванской *ливой*)» подробно анализируются переписи вышеупомянутых регионов, несмотря на их нахождение за пределами Ереванского *вилайета*. Дается детальный анализ при сравнении с Ереванской *ливой*, где выявляются все закономерности проведения Османской переписи в двух налоговых реестрах.

В заключениях приведены основные итоги диссертации.

MIRZABEKYAN GEORGI A.

OTTOMAN CENSUSES OF THE YEREVAN VILAYET OF 1590, YEREVAN LIVA OF 1728 AND NEIGHBORING NORTHERN REGION. (COMPARATIVE ANALYSIS)

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of «Historiography, Source Study» 07.00.05.

The defense on the dissertation will be held on the 3th of July, 2018, 13^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SCC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA
(0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

SUMMARY

This research paper is mainly devoted to the Ottoman tax register of the Yerevan *Vilayet* of 1590, the Yerevan *Liva* and Ashotsk, Tashir, Pambak regions of 1728: the latter were part of the Tbilisi *Vilayet*.

The thesis consists of an introduction, three chapters, a conclusion, bibliography, as well as an appendix. The introduction states the importance and relevance of the study, spatial and chronological framework, goals and objectives, presents the scientific novelty of the thesis and analyses used literature and sources.

The first chapter – "The Ottoman-Safavid war of 1578-1590 and the census of the Yerevan *Vilayet* of 1590" describes the history of the war between the Ottoman Empire and Safavid Iran at the end of the XVI century. Events, resulting in conquering Transcaucasia and keeping these territories for more than one decade by the Ottoman Empire, are presented in this chapter. The tax register of the Yerevan *Vilayet* is carefully studied: including its administrative and political

divisions, the names of all villages, the ethno-demographic state and the number of properties owned by the population. In addition, the required taxes are assessed comprehensively, which gives a clear idea of the socio-economic situation of the *Vilayet*.

The second chapter – "The new conquest of Eastern Armenia by the Ottoman Empire in the third decade of the XVIII century and the census of the Yerevan *Liva* of 1728" presents the history of political development, as a consequence of which Eastern Armenia underwent Ottoman conquest again. The administrative-political division is identified and ethno-demography and socio-economic issues are properly studied. In this chapter, we also addressed the issues of rights of the Holy See provided by the Ottomans. Censuses of the Yerevan *Vilayet* and Yerevan *Liva* of 1590 and 1728 respectively, are compared in detail.

The third chapter –"Ashotsk, Tashir and Pambak *nahies* of the Tbilisi *Vilayet* of XVIII century (comparison with the Yerevan *Liva*)" analyses the censuses of the above-mentioned regions in detail, despite the fact of their location outside the Yerevan *Vilayet*. A comprehensive analysis is given in comparison with the Yerevan *Liva*, where all the patterns of the Ottoman census of two tax registers are revealed.

The conclusion contains the main results of the research.